



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ  
БЮЛЛЕТЕНЬ

№ 2

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում  
գետեղված տեղեկությունները  
համարվում են հրապարակված 2016 թվականի փետրվարի 16-ից

<b>ԳՅՈՒՏԵՐ</b> .....	<b>4, 90</b>
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i> .....	<b>6, 92</b>
<b>ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ</b> .....	<b>11, 97</b>
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i> .....	<b>13, 99</b>
<b>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ</b> .....	<b>14, 100</b>
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i> .....	<b>16, 102</b>
<b>ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ</b> .....	<b>18</b>
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i> .....	<b>20</b>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i> .....	<b>71</b>
<b>ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐ</b> .....	<b>72</b>
<i>Տեղեկություններ ապրանքային և սպասարկման նշանների հայտերի մասին</i> .....	<b>74</b>
<b>ՑՈՒՑԻՉՆԵՐ</b> .....	<b>83</b>
<b>ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>85</b>
<b>ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ</b> .....	<b>103</b>

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
 Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին  
 Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

0010, Երևան, Главный проспект, Дом Правительства 3  
 Тел. (374 11) 597-537 отдел приема заявок  
 Тел. (374 11) 597-535 отдел информационно-технологического обеспечения

## СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 90
Сведения о выданных патентах.....	6, 92
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	11, 97
Сведения о выданных патентах.....	13, 99
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	14, 100
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	16, 102
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	18
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания .....	20
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	71
ЗАЯВКИ НА ТОВАРНЫЕ ЗНАКИ .....	72
Сведения о заявках товарных знаках и знаках обслуживания.....	74
УКАЗАТЕЛИ.....	83
СООБЩЕНИЯ.....	85
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	103

## CONTENTS

INVENTIONS.....	4, 90
Information on granted patents.....	6, 92
UTILITY MODELS.....	11, 97
Information on granted patents.....	13, 99
INDUSTRIAL DESIGNS.....	14, 100
Information on registered industrial designs.....	16, 102
TRADE MARKS.....	18
Information on registered trade marks and service marks .....	20
Information on renewal of effect of trademark registration .....	71
TRADEMARK APPLICATIONS .....	72
Information on trademarks and service marks applications .....	74
INDEXES.....	83
REPORTS.....	85
TWO-LETTER CODES.....	103

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*  
*A գյուտի արտոնագիր*  
*B արտոնագրառունակության մասին եզրակացություն*
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

**Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին**

(51) **2016.01** (11) **2993** (13) **A**  
**A01B39/00**  
**A01B41/00**

(21) **AM20150099** (22) **29.07.2015**  
 (72) Արշալույս Թարվերոյան (AM), Դանիել Պետրոսյան (AM), Սամվել Սարգսյան (AM), Շավարշ Գրիգորյան (AM), Ժուլվերն Մկրտչյան (AM)  
 (73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

**(54) Միջծառային տարածությունների մշակման մեքենա**

(57) Գյուտը վերաբերում է հողի մշակման մեքենաներին, նախատեսված է այգիների միջծառային տարածությունների մշակման համար և կարող է օգտագործվել գյուղատնտեսության այլ բնագավառներում:

Միջծառային տարածությունների մշակման մեքենան ունի շրջանակ, կախցի համակարգ, ուղղաձիգ լիսեռի շուրջը պտտման հնարավորությամբ տեղակայված բանող անիվ՝ իր դանակներով և պաշտպանիչ շերտով, և հիդրոշարժիչ: Բանող անվի լիսեռն ամրակցված է շրջանակին, լիսեռին լծակով միակցված է պաշտպանիչ շերտով շրջափակված երկրորդ բանող անիվն իր դանակներով: Մեքենան լրացուցիչ ունի շրջանակին կարգավորելի հեծանով ամրակցված ոռոգման ակոսահան:

Ապահովվում է միջծառային տարածությունների հողի փխրեցումը և մոլախոտերի ոչնչացումն առանց ծառերի բներին վնաս պատճառելու, 3 նկ.:

(51) **2016.01** (11) **2994** (13) **A**  
**A61B8/00**

(21) **AM20150146** (22) **06.11.2015**  
 (72) Արտակ Մկրտչյան (AM), Ալպիկ Մկրտչյան (AM), Վաչե Նալբանդյան (AM), Վաղարշ Խաչիկյան (AM), Գագիկ Բազիկյան (AM)  
 (73) ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ, 0014, Երևան, Հր. Ներսիսյանի 25 (AM)

**(54) Կենդանի օրգանիզմում չարորակ ուռուցքի հայտնաբերման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ կենդանի օրգանիզմներում C-180 տեսակի սարկոմայի (արագ զարգացող չարորակ ուռուցքի) հայտնաբերմանը:

Կենդանի օրգանիզմի վրա ուղղում են ուլտրաձայնային ալիքներ, սկանավորում են ձևափոխված ալիքները, որից հետո համադրում են առողջ և հիվանդ կենդանի օրգանիզմների գրանցված ալիքների սպեկտրները: Ուլտրաձայնային ալիքներն ուղղում են ամբողջ կենդանի օրգանիզմի վրա, սկանավորում են անդրադարձած ալիքները՝ սկանավորման քայլի 1 կՀց արժեքով: Ըստ սպեկտրների տարբերության էներգիական ելքի՝ դատում են օրգանիզմում չարորակ ուռուցքի առկայության մասին:

Ապահովվում է չարորակ ուռուցքի առկայության վաղաժամ հայտնաբերումը և հիվանդության ընթացքի դինամիկ ախտորոշումը, ինչպես նաև եղանակի ճշգրտության բարձրացումը, 1 նկ.:

(51) **2016.01** (11) **2995** (13) **A**  
**A61K 33/00**

(21) **AM20140102** (22) **06.08.2014**  
 (72) Վահրամ Գրիգորի Գաբզիմայան (AM), Վարսենիկ Մարիկի Ավետիսյան (AM)  
 (73) Վահրամ Գրիգորի Գաբզիմայան, 0005, Երևան, Արցախի պող. 1, բն. 32 (AM), Վարսենիկ Մարիկի Ավետիսյան, 0025, Երևան, Հերացու 14/4 (AM)

**(54) Հականիկոտինային միջոց**

(57) Հականիկոտինային միջոցը բաղկացած է դեղամիջոցի՝ անաբազին հիդրոքլորիդի և լինֆիլիզացված բնական մթերքի խառնուրդից: Հականիկոտինային միջոցը պատրաստված է հաբի տեսքով: Օգտագործվում է լեզվի տակ դնելով, մշակված գրաֆիկով:

Ապահովվում է բարձր արդյունավետությունը:

(51) **2016.01** (11) **2996** (13) **A**  
**A61L2/00**

(21) **AM20140104** (22) **07.08.2014**

(72) Ժիրայր Հարությունի Սևոյան (AM)  
(73) Ժիրայր Հարությունի Սևոյան, 0039, Երևան, Եղբայրության 19, բն. 44 (AM)

**(54) Մանրէագերծման սարք**

(57) Գյուտը վերաբերում է ախտահանման և մանրէագերծման տեխնիկային և նախատեսված է ախտահանման և մանրէագերծման պարագաների համար:

Մանրէագերծման սարքն ունի ախտահանման խցիկ, հաջորդաբար տեղակայված էլեկտրական հոսանքի սնուցման աղբյուր, գազալիցքաթափման հանգույց, օդամղիչ և տաքացուցիչ: Տաքացուցիչից հետո հաջորդաբար տեղադրված են եթերայուղ պարունակող ջերմակայուն պարկուճ՝ միացված էլեկտրական սնուցման աղբյուրին, և կիսահաղորդչային դիոդի տեսքով ուլտրամանուշակագույն ճառագայթման աղբյուր:

Պարզեցվում է կառուցվածքը, 2 նկ.:

(51) **2016.01** (11) **2997** (13) **A**  
**A61L2/00**

(21) **AM20150123** (22) **01.10.2015**

(72) Լևոն Աղասիի Թավադյան (AM), Լևոն Անդրանիկի Ներսեսյան (AM), Կարինա Մարտիրոսի Գրիգորյան (AM), Արմեն Իգնատիոսի Մարտիրոսյան (AM), Սեյրան Հենրիկի Մինասյան (AM), Վլադիմիր Աղաբեկով (BY), Ալեքսանդր Ռատկո (BY), Մոհամմեդ Ալ-Ֆազի (SA), Տուրկի Սաուդ Մոհամմեդ Ալ - Սաուդ (SA)

(73) ՀՀ ԳԱԱ «Ա.Բ.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ (AM)

**(54) Ախտահանող-վազող միջոց**

(57) Գյուտը վերաբերում է միկրոօրգանիզմների դեմ պայքարելու քիմիական միջոցներին, մասնավորապես՝ ախտահող-վազող միջոցների բաղադրանյութերին և կարող է կիրառվել բժշկության, հիգիենայի, առողջապահության, անասնաբուժության, արդյունաբերության մեջ և կենցաղում:

Ստեղծված է ախտահանող-վազող միջոց, որը ներառում է հետևյալ բաղադրամասերը,

զանգվ. % . ջրածնի պերօքսիդ՝ 0.1-3.3, հակակոռոզիական հավելանյութ՝ 0.002-0.004, կայունարար՝ 0.1-0.3, լվացող մակերևութաակտիվ ազդակ՝ 0.05-0.1, ակտիվարար՝ 3.8-5.8 և ջուր՝ մնացածը: Որպես հակակոռոզիական հավելանյութ օգտագործված է ֆոսֆորական թթվի աղ: Որպես կայունարար օգտագործված է միզանյութ: Որպես մակերևութաակտիվ նյութ օգտագործված է կարբօքսիլմեթիլցելյուլոզ, ալկիլսուլֆոնատ, սուլֆանոլ, ալկիլարիլսուլֆանոլ կամ դրանց ցանկացած խառնուրդը: Որպես ակտիվարար օգտագործված են կոմպլեքսագոյացնող լիզանդ և ալկալիական մետաղի աղ:

Բարձրացվում է ախտահող-վազող միջոցների մանրէասպան, սնկասպան և հակատուբերկուլոզային ակտիվությունը:

(74) Ռուբեն Մանասերյան

(51) **2016.01** (11) **2998** (13) **A**  
**B26F1/00**

(21) **AM20150138** (22) **19.10.2015**

(72) Մկրտիչ Մարկոսյան (AM)

(73) Մկրտիչ Մարկոսյան (AM)

**(54) Գրասենյակային դակիչ**

(57) Գյուտը վերաբերում է գրասենյակային անցքահատ գործիքներին, մասնավորապես՝ գրասենյակային անցքահատ աքցաններին և կարող է օգտագործվել գործավարությունում՝ թղթից, ստվարաթղթից և այլ նյութերից փաստաթղթերի համակարգված պահպանման համար:

Դակիչն ունի հիմնատակ, սեղմելու լծակ և ձողավոր ծակող տարր, որի աշխատանքային ծայրը կատարված է սրվածքով: Հիմնատակը կատարված է բացակով՝ ծակոտվող թղթի տեղադրման համար, որտեղ կատարված է թղթի անկյան դիրքավորման համար ուղղանկյուն ելուստ: Դակիչն ունի առածգական մետաղից պատրաստած ծակող տարրի կալիչ, որի մի ծայրը միացված է հիմնատակի ծայրին, իսկ մյուս ծայրամասում կատարված է խորացում: Խորացման մեջ կատարված է երկայնական անցք, որում ազատ տեղակայված է ծակող տարրի ոչ աշխատանքային ծայրը, որի վրա կատարված է օղակաձև ելուստ՝ երկայնական

անցքի լայնությունից ավելի մեծ տրամագծով: Խորացումը փակված է վերևից թիթեղով՝ առանց ծակող տարրի հետ հպման հնարավորության: Հիմնատակում և բացակի վերևի մակերևույթում համառանցք երկայնական անցքին կատարված են ծակող տարրի անցման համար անցքեր: Սեղմելու լծակը կապված է կալիչի և բացակի վերևի մակերևույթի հետ հենարանային ձողով, որի հետ հողակապված է՝ հենարանային ձողի հետ միասին հորիզոնական հարթությունում և հենարանային ձողի շուրջ ուղղահայաց հարթությունում պտտվելու հնարավորությամբ: Սեղմելու լծակը թիթեղի հետ հպման գոտում կատարված է ուռուցիկ: Դակիչն ունի նաև զոլակներ թղթի երկայնքով անցքեր դակելու համար՝ կախված դակվող թղթի ձևաչափից:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրացվում է օգտագործման հարմարավետությունը և ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 4 նկ.:

(74) Արեգ Պետրոսյան

(51) **2016.01** (11) **2999** (13) **A**  
**B29D 7/00**

(21) **AM20150071** (22) **02.06.2015**

(72) Գևորգ Պետրոսյան (AM), Մարատ Սաֆարյան (AM), Մարտին Արզումանյան (AM), Գևորգ Կեսոյան (AM)

(73) «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Չեռակալված փոշենյութերի դեֆորմացման իրական բնութագրերի որոշման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ չեռակալված փոշենյութերի դեֆորմացման իրական բնութագրերի որոշմանը, առանցքային ճնշման տակ գտնվող փոշենմուշը լայնական հատույթով կտրելու պարզեցված եղանակով, և կարող է օգտագործվել փոշենյութերից պատրաստվող մամլվածքների արտադրության տարբեր բնագավառներում:

Ըստ չեռակալված փոշենյութերի դեֆորմացման իրական բնութագրերի որոշման եղանակի, մամլակաղապարում մամլված փոշենմուշի առանցքային սեղմման պայմաններում

միաժամանակ գործող մամլման և սահքի ճնշումների առկայությամբ չափում են առաջացած նորմալ և շոշափող լարումների արժեքները: Կառուցում են Մոր-Կուլոնի չափանիշին համապատասխան գրաֆիկը: Գրաֆիկի միջոցով որոշում են փոշենյութերի դեֆորմացման բնութագրերը: Գյուտի համաձայն՝ մամլակաղապարում տեղադրում են չեռակալված քառակուսի հատույթով փորձանմուշ, ապա առանցքային սեղմման պայմաններում սահքի են ենթարկում այն ուղիղ եզրով դանակի միջոցով՝ ճնշման աստիճանական փոփոխությամբ:

Պարզեցվում է Մոր-Կուլոնի չափանիշի գրաֆիկի կառուցման գործընթացը, 2 նկ.:

(51) **2016.01** (11) **3000** (13) **A**

**E01C 19/00**

(21) **AM20140105** (22) **07.08.2014**

(72) Մարատ Սարգսյան (AM), Մարինե Ավագյան (AM)

(73) Մարատ Սարգսյան, 0001, Երևան, Մոսկովյան 9, բն. 5բ (AM), Մարինե Ավագյան, 0041, Երևան, Նոր Արեշի 17-րդ փող. 20 (AM)

(54) **Ճանապարհային գլղոն**

(57) Ճանապարհային գլղոնն ունի կոշտ շրջանակ, միևնույն լայնության, մեկը մյուսին հաջորդող, մեկ գծով տեղադրված երեք հարթ մետաղական սնամեջ գրտնանիվներ: Հետևի գրտնանիվը տանող է, իսկ շրջադարձային և երկսեկցիա առջևինն ու միջինը՝ տարվող: Առջևի գրտնանիվը միակցված է շրջանակին: Միջին գրտնանիվը, որն իրեն ընդգրկող լայնական Ո-աձև կախոցի և սունացի միջոցով միակցված է շրջանակին, ունի երկու համափուլ աշխատող բարձրացման-իջեցման հիդրոզլան-սողանային մեխանիզմներ: Մեխանիզմներից յուրաքանչյուրը կազմված է հիդրոզլանից, ելուստներով ուղղորդիչներից և ակոսներով պրիզմայաձև սողանից: Սողանը հանդիսանում է գրտնանիվի սոնու հենարանը, տեղադրված է գրտնանիվի երկու կողմերում՝ կախոցի երկճյուղ հենակի վրա և տեղաշարժվում է ուղղորդիչներով: Հիդրոզլանների իրանները գլանական հողակապերով միակցված են կախոցի լայնակին, իսկ մխոցակոթերն

արտաքին կողմերից գլանական հողակապերով միակցված են սողաններին: Գրտնանիվի սունին բույթերի միջոցով ամրակցված է սողաններին՝ դրանց ներքին կողմերից:

Ապահովվում է գլրոնի համապիտանիությունը, բարձրացվում է արտադրողականությունը, 3 նկ.:

(51) **2016.01** (11) **3001** (13) **A**  
**F02B 23/00**

(21) **AM20150150** (22) **13.11.2015**

(72) Կարապետ Հակոբի Մոսիկյան (AM), Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Մարինա Սերգեյի Բարսեղյան (AM), Մարգարիտա Գևորգի Պապինյան (AM)

(73) Կարապետ Հակոբի Մոսիկյան, 0064, Երևան, Բաժնու 93, բն. 60 (AM)

(54) **Ներքին այրման շարժիչի այրման խուց**

(57) Գյուտը վերաբերում է շարժիչաշինությանը, մասնավորապես՝ ներքին այրման շարժիչի այրման խցի կառուցվածքին:

Ներքին այրման շարժիչի այրման խուցը սահմանափակված է գլանի պատով, գլանի կափարիչով և մխոցով: Գլանի կափարիչը և մխոցի հատակը կատարված են հատած կոնի տեսքով: Մխոցի հատակի կողմնային ամբողջ մակերևույթով կատարված են իրարից հավասարահեռ կիսազլանածև հանվածքներ:

Մեծացվում է ինդիկատորային հզորությունը ներքին այրման շարժիչի այրման խցում, 1 նկ.:

(51) **2016.01** (11) **3002** (13) **A**  
**F16H 31/00**

(21) **AM20140096** (22) **30.07.2014**

(72) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM), Սուրեն Ալբերտի Պողոսյան (AM), Պատվական Ռուբենի Հախինյան (AM)

(73) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան, 0088, Երևան, Շիրազի 20, բն. 30 (AM), Սուրեն Ալբերտի Պողոսյան, 0088, Երևան, Շիրազի 20, բն. 30 (AM), Պատվական Ռուբենի Հախինյան, 0091, Երևան, Մ. Մելիքյան 13, բն. 23 (AM)

(54) **Պտուտակային փոխանցիչ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը և կարող է օգտագործվել ավտոմատ սարքավորումների, արագ գործող սեղմիչների, ամբարձիչների և մամլակների մեջ:

Պտուտակային փոխանցիչն ունի իրան, երկայնական ակոսով պտուտակ, կազմովի մանեկ, որը կազմված է չորս և ավելի ներդրակներից, որոնք կատարված են շերտաձողի տեսքով: Ներդրակները տեղադրված են իրանի մեջ՝ կենտրոնական մասում աստիճանավոր անցքի մակերևույթի վրա և հենված են ծայրամասերում տարբեր բարձրություններով միևնույն ուղղությամբ արված թեք մակերևույթներին: Ներդրակների ճակատային մասերում արված կոնական մակերևույթներին մի կողմից հենված է համապատասխան կոնական մակերևույթով իրանի անցքի մեջ համառանցք զսպանակված հենարանը, մյուս կողմից՝ համապատասխան կոնական մեկերևույթով պատճենասալը: Պատճենասալը համառանցք տեղակայված է իրանի անցքի մեջ՝ միայն առանցքային ուղղությամբ տեղափոխվելու հնարավորությամբ: Պատճենասալի մյուս ճակատին արված միևնույն բարձրության պարուրածև թեք հարթությունները երկու գնդիկների միջոցով հենված են իրանի անցքի մեջ ազատ տեղակայված զսպանակած սկավառակին: Սկավառակը միաժամանակ հենված է իրանին՝ առանցքային ուղղությամբ տեղափոխվելու հնարավորությամբ, և երիթի միջոցով կապված է պտուտակին, որը ազատ տեղակայված է իրանի անցքի ծայրամասերում համառանցք ուղղորդիչների մեջ: Ներդրակների պատճենասալին հենված ծայրամասերի թեք մակերևույթներն իջեցված են մինչև 2 մմ իրանի առանցքի ուղղությամբ, առաջացնելով ողղանկյուն մակերևույթներ ներդրակների վրա: Իրանի անցքի մեջ եղած փորակների հատակների համապատասխան ծայրամասերի թեք մակերևույթներն իրանի առանցքի ուղղությամբ իջեցված են մինչև 2 մմ, այնպես որ առաջացած ուղղանկյուն մակերևույթներին ներդրակների համապատասխան մակերևույթների հենվելն ապահովի նորմալ կառչում պտուտակի և ներդրակների միջև:

Բարձրացվում է փոխանցիչի հուսալիությունը, բարելավվում են շահագործման պայմանները, 3 նկ.:

(51) 2016.01 (11) 3003 (13) A  
**G02F1/00**

(21) **AM20150065** (22) **20.05.2015**

(72) Հակոբ Մարգարյան (AM), Դավիթ Հովհաննիսյան (AM), Նունե Հակոբյան (AM), Վալերի Աբրահամյան (AM), Վլադիմիր Հարությունյան (AM), Նելսոն Թաբիրյան (US)

(73) Հակոբ Մարգարյան, 0055, Երևան, Թաղևույան 10, բն. 59 (AM), Դավիթ Հովհաննիսյան, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 19, բն. 45 (AM), Նունե Հակոբյան, 0033, Երևան, Բաղրամյան 75, բն. 11 (AM), Վալերի Աբրահամյան, 0905, Արմավիրի մարզ, Արմավիր, Հերացի 8, բն. 3 (AM)

**(54) Հեղուկ բյուրեղային բևեռային դիֆրակցիոն ալիքային թիթեղ**

(57) Գյուտը վերաբերում է օպտիկայի ոլորտին, մասնավորապես՝ հեղուկ բյուրեղային պոլիմերների հիման վրա կենտրոնահամաչափ բևեռային դիֆրակցիոն ալիքային թիթեղի ստեղծմանը և դրա պատրաստման եղանակի մշակմանը, և կարող է կիրառվել օպտիկական սարքաշինության մեջ:

Հեղուկ բյուրեղային բևեռային դիֆրակցիոն ալիքային թիթեղը պատրաստվում է ֆոտոկողմնորոշվող նյութով պատված շրջանաձև հարթակի վրա անկյունային սեկտորի ձև

ունեցող ճեղքի միջով անցած երկու՝ աջ և ձախ շրջանային բևեռացվածությամբ ճառագայթների վերադրմամբ, ընդ որում ճեղքի գագաթը համընկնում է շրջանաձև հարթակի կենտրոնի հետ և սեկտորի համաչափության առանցքը ուղղահայաց է երկու գրանցող ճառագայթների վերադրումից գոյացած ինտերֆերենցիոն գծերին: Այնուհետև հարթակը պատվում է հեղուկ բյուրեղային պոլիմերի շերտով, որի մոլեկուլների դասավորվածությունը կրկնում է ճառագայթվող ֆոտոկողմնորոշվող նյութի մոլեկուլների դասավորվածությունը: Ստացվում է կենտրոնահամաչափ հեղուկ բյուրեղային բևեռային դիֆրակցիոն ալիքային թիթեղ, որում հեղուկ բյուրեղի մոլեկուլների ուղղորդիչների դասավորվածությունը յուրաքանչյուր շառավղի երկայնքով համապատասխանում է առանցքային հեղուկ բյուրեղային դիֆրակցիոն ցանցի, իսկ մեկ տրամագծի երկայնքով գրանցված երկու բևեռային դիֆրակցիոն ցանցերում հեղուկ բյուրեղի դիրեկտորների դասավորվածությունը կենտրոնի նկատմամբ համաչափ է:

Թիթեղի միջոցով ընկնող կամայական բևեռացվածությամբ ճառագայթը բաժանվում է աջ և ձախ շրջանային բևեռացվածությամբ երկու բաղադրիչների, 4 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ  
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

<b>11</b>	<b>արտոնագրի համարը</b>
<b>13</b>	<b>փաստաթղթի տեսակի կոդը</b> <b>U</b> <b>օգտակար մոդելի արտոնագիր</b>
<b>21</b>	<b>հայտի համարը</b>
<b>22</b>	<b>հայտի ներկայացման թվականը</b>
<b>23</b>	<b>ցուցահանդեսային առաջնության թվականը</b>
<b>31</b>	<b>առաջին հայտի համարը</b>
<b>32</b>	<b>առաջին հայտի ներկայացման թվականը</b>
<b>33</b>	<b>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը</b>
<b>45</b>	<b>օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը</b>
<b>51</b>	<b>միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)</b>
<b>54</b>	<b>օգտակար մոդելի անվանումը</b>
<b>56</b>	<b>տեղեկատվության աղբյուրներ</b>
<b>57</b>	<b>օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը</b>
<b>62</b>	<b>ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը</b>
<b>72</b>	<b>օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը</b>
<b>73</b>	<b>արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը</b>
<b>74</b>	<b>արտոնագրային հավատարմատար</b>
<b>85</b>	<b>միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը</b>
<b>86</b>	<b>միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը</b>
<b>87</b>	<b>միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը</b>

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2016.01** (11) **441** (13) **Ս**  
**B64D 9/00**

(21) **AM20150144U** (22) **29.10.2015**

(72) Եգոր Համբարյան (AM)

(73) «Էյչ Էյր Ինժիներինգ» ՍՊԸ, 0052, Երևան,  
Ձ. Սարկավազի 54/4, բն. 27 (AM)

(54) **Բազմաֆունկցիոնալ կործանիչ ինքնաթիռի ֆյուզելաժի փոխադրման տարա**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է ավիացիային, մասնավորապես՝ ինքնաթիռի փոխադրման տարաներին, և կարող է օգտագործվել տարբեր փոխադրամիջոցներով բազմաֆունկցիոնալ կործանիչ ինքնաթիռի և դրա մոդիֆիկացիաների փոխադրման համար:

Տարան պատրաստված է պողպատյա պրոֆիլներից և ունի հեծանաֆերմային կառուցվածք, հենակային չորս շրջանակ, կոշտության կողեր, շրջանակների հորիզոնական կողմերով և կոշտության կողերով կազմավորված և շրջանակներին միակցված հիմք: Շրջանակներից յուրաքանչյուրն ունի կառանման և ամրակցման օղակներ: Տարան լրացուցիչ ունի վերամբարձ կռունկով բարձրացման և կառանման օղակներով վեց շրջանակ, շրջանակների ուղղաձիգ կողմերով և կոշտության կողերով

կազմավորված պատեր և պատերի միջոցով հիմքին միակցված վերին հիմք՝ կազմավորված շրջանակների հորիզոնական կողմերով և կոշտության կողերով: Շրջանակներից առաջինը, յոթերորդը, ութերորդը, իններորդն ու տասներորդը հենակային են և ունեն ֆյուզելաժի հենման տարրեր ու պրոֆիլային հեծաններ: Երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ ու վեցերորդ շրջանակներն օժանդակ են և ունեն ֆյուզելաժի հենման պրոֆիլային հեծաններ: Յուրաքանչյուր պատն ունի հանովի ֆերմային մաս, որը տեղադրված է երկրորդ ու հինգերորդ շրջանակների միջև: Կոշտության կողերը միակցված են հիմքերին, պատերին և շրջանակներին: Շրջանակների վերին հեծաններն ու վերին կոշտության կողերը, վերին հիմքի կոշտության կողերը հանովի են: Հիմքերից ստորինն ունի երեք զուգահեռ հեծաններ՝ տրանսպորտային ինքնաթիռի բեռնախցի հատակի հողվակների վրա տարայի տեղակայման համար:

Ապահովվում է ծանր տրանսպորտային ինքնաթիռներով փոխադրման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը, նվազեցվում է մոնտաժման աշխատանքների ծավալը, 18 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	<i>վկայագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ստացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
24	<i>գրանցման թվականը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
51	<i>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</i>
54	<i>արդյունաբերական նմուշի անվանումը</i>
55	<i>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</i>
72	<i>հեղինակը(ները), երկրի կոդը</i>
73	<i>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>

## Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

- (51) 20-01 (11) 380 (13) S  
 (21) 20150028 (22) 04.08.2015  
 (72) Դավիթ Զուն (RU), Հակոբ Թումանյան (AM)  
 (73) Դավիթ Զուն (RU), Հակոբ Թումանյան (AM)  
 (74) Ռ. Մանասերյան  
 (54) **Ընդպելիք պատրաստող և վաճառող առևտրային ավտոմատ**  
 (55)



1.1



1.3



1.4




1.2



1.5



1.6



1.7

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ**

**ТОВАРНЫЕ ЗНАКИ**

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

## Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20150019 (111) 23986  
(220) 20.01.2015 (151) 01.02.2016  
(181) 20.01.2025  
(730) «Ֆեյմըս գրուպ» ՍՊԸ, Երևան, Էստո-  
նական 14, բն. 37, AM  
(442) 05.03.2015  
(540)



(526) «KALYAN LOUNGE» արտահայտությունն  
ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:  
(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև,  
կարմիր և սպիտակ գունային համակցությամբ:  
(511)

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով  
ապահովման ծառայություններ. ժամանակավոր  
բնակատեղով ապահովում:

(210) 20150362 (111) 23987  
(220) 17.03.2015 (151) 01.02.2016  
(181) 17.03.2025  
(730) Նիսսան Ջիդոշա Կաբուշիկի Կաիշա (Նաս  
գործող որպես Նիսսան Մոթոր Բո., Լթդ.), JP  
(442) 19.08.2015  
(540)



(511)  
դաս 1. քիմիական նյութեր, որոնք նախա-  
տեսված են օգտագործելու արդյունաբե-  
րական և գիտական նպատակներով,  
լուսանկարչության, գյուղատնտեսության,  
այգեգործության և անտառաբուծության մեջ.  
չմշակված սինթետիկ խեժեր, չմշակված  
պլաստմասսաներ. պարարտանյութեր. կրակ-  
մարող բաղադրություններ. քիմիական  
նյութեր մետաղների զոդման և միման  
համար. քիմիական նյութեր սննդամթերքի  
պահածոյացման համար. դաբաղիչ նյութեր.  
սոսնձող նյութեր արդյունաբերական  
նպատակներով օգտագործելու համար.  
քիմիկատներ ապակու ներկման համար.  
քիմիկատներ ապակու փայլատման համար.  
պատրաստուկներ ապակու խամրումը կանխելու  
համար. հակաստատիկ պատրաստուկներ  
(բացառությամբ կենցաղայինների). քիմիա-  
կան պատրաստուկներ ավտոնորոգման  
և տեխնիկական սպասարկման համար.  
քիմիական պատրաստուկներ անջրան-  
ցիկության համար. քիմիական բաղա-  
դրություններ հողմապակու նորոգման  
համար. արդյունաբերական (արտադրական)  
սոսինձներ. քիմիական հերմետիկացնող  
բաղադրություններ տրանսպորտային միջոց-  
ների մասերի և մակերևույթների համար.  
չմշակված էպօքսիդային խեժեր. արտադրա-  
կան գործընթացներում օգտագործվող ճար-  
պագրկող պատրաստուկներ. ճարպագրկող  
պատրաստուկներ ավտոմոբիլների համար.  
պատրաստուկներ անջատման և պոկման  
(սոսնձով կպցրածի) համար. քիմիական  
հավելանյութեր յուղերի համար. վառելանյութի  
ներարկման համակարգը մաքրող քիմիական  
հավելանյութեր. քիմիական հավելանյութեր  
ռադիատորներում քայքայումը կանխարգելելու  
համար. քիմիական հավելանյութեր օդի  
լավորակիչների սառեցման համար. քիմիական  
հավելանյութեր շարժիչային վառելիքի համար.  
թթվեցրած ջուր կուտակիչների լիցքավորման  
համար. արգելակի հեղուկներ. ուղղորդիչ

բանող հեղուկ. փոխհաղորդակային հեղուկ. բաղադրություններ տրանսպորտային միջոցների շարժիչների սառեցման համար.

դաս 2. ներկեր, արծնուկներ, լաքեր. մետաղը ժանգոտումից և փայտանյութը քայքայումից պաշտպանող նյութեր. ներկանյութեր. խաճանյութեր, ներկանյութերի սևեռակայիչներ. չմշակված բնական խեժեր. թերթավոր և փոշենման մետաղներ՝ գեղարվեստական, գեղազարդման նպատակների և գեղարվեստական տպագրության համար. պաշտպանական նախաներկային (ներկապատառային) պատվածքներ տրանսպորտային միջոցների շրջանակների (հենոցների), ամրաշրջանակների համար. նախաներկեր. պատվածքներ (ներկեր). թանձր հակակոռոզիական քսուքներ. հակակոռոզիական յուղեր. բաղադրություններ ժանգից պաշտպանելու համար. բաղադրություններ տրանսպորտային միջոցները ժանգից պաշտպանելու համար. պաշտպանական պատրաստուկներ մետաղների համար.

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպազերծման և հղկամշակման համար. օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի փոշիներ և մածուկներ. հեղուկներ ապակիների, այդ թվում՝ հողմապակիների, մաքրման համար. մածուկներ ողորկման համար. պատրաստուկներ ժանգի հեռացման համար. պատրաստուկներ ներկերի հեռացման համար. պատրաստուկներ ողորկման կամ փայլ հաղորդելու համար. անուշաբույր ջուր (օդեկոլոն).

դաս 4. տեխնիկական յուղեր և (թանձր) քսուքներ. քսանյութեր. փոշու կլանման, թրջման և կապակցման բաղադրություններ. վառելիք (ներառյալ շարժիչային բենզինը) և նյութեր լուսավորման նպատակների համար. մոմեր, պատրույզներ լուսավորման համար. մեքենայի յուղ. թանձր քսուքներ. տեխնիկական գերչակածեթ.

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ սնունդ և նյութեր բուժական

կամ անասնաբուժական նպատակների համար, մանկական սնունդ. դիետիկ հավելումներ մարդկանց և կենդանիների համար. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վսասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ. դեղատնային հավաքակազմ (դյուրակիր). հոտազերծիչներ (բացառությամբ մարդու կամ կենդանիների համար նախատեսվածների). պատրաստուկներ օդի մաքրման համար. հոտազերծիչներ օդի թարմացման համար. ճամփորդական դեղատնային հավաքակազմեր (դյուրակիր, լիքը). վարակազերծիչ (ախտահանիչ) միջոցներ հիգիենիկ նպատակների համար. պատրաստուկներ մակաբույծների ոչնչացման համար. ֆունգիցիդներ (սնկասպան նյութեր). պատրաստուկներ վսասատու բույսերի ոչնչացման համար.

դաս 11. լուսավորման, ջեռուցման, շոգու արտադրման, սննդամթերքի ջերմամշակման, սառեցման, չորացման, օդափոխման, ջրաբաշխման և սանիտարատեխնիկական սարքեր. տրանսպորտային միջոցների օդի լավորակման տեղակայանքներ. օդի զտման տեղակայանքներ. տրանսպորտային միջոցների հակաշլացուցիչ հարմարանքներ (լամպի պիտույքներ). տրանսպորտային միջոցների հակասառցապատիչներ. օդափոխիչներ (օդի լավորակման տեղակայանքների մասեր). ավտոմեքենաների ցոլալապտերներ. ցամաքային տրանսպորտային միջոցների ցոլալապտերներ. տրանսպորտային միջոցների ջեռուցման (տաքացման) տեղակայանքներ. օդի իոնացման ապարատներ. լամպեր ավտոմոբիլների շրջադարձի ցուցիչների համար. լամպեր ցամաքային տրանսպորտային միջոցների շրջադարձի ցուցիչների համար. լուսավորման սարքեր և տեղակայանքներ. ռադիատորների խցաններ. ջեռուցման ռադիատորներ. տրանսպորտային միջոցների անդրադարձիչներ. սառնարանային ապարատներ և մեքենաներ. տրանսպորտային միջոցների օդի լավորակման տեղակայանքներ. օդափոխիչ ապարատներ և տեղակայանքներ (օդի լավորակում) տրանսպորտային միջոցների համար. էլեկտրական լամպեր. լամպերի կոթառներ. լուսացրիչներ. առկայծող լուսարձակներ.

դաս 25. հագուստ, կոշիկեղեն, գլխարկներ. գոտիներ (հագուստ). գլխի ծածկոցներ. բոլորագլխարկներ. հովարներ գլխարկների համար. վզպատներ. կաշններ. թիկնոցներ. մորթե թիկնոցներ. փողկապներ. բանվորական բլուզներ. շքագգեստներ (սպասավորների). արտահագուստ. հագուստ ավտոմոբիլիստների համար. բաճկոններ. տրիկոտաժե հագուստ. եղջրվամուշտակներ. շապիկներ (բլուզներ). պոլոկերներ. սվիտերներ. գամաշներ (ճարմանդներ). բազկապատներ (թևքածալեր). ձեռնոցներ (հագուստ). (կիսա)կոշիկներ.

դաս 27. գորգեր, հատակի ծածկոցներ, խսիրներ, լինօլեում և այլ հատակածածկոյթներ. պատի պաստառներ (ոչ մանածագործական). գորգեր ավտոմեքենաների համար. գորգեր ցամաքային տրանսպորտային միջոցների համար.

դաս 28. խաղեր և խաղալիքներ. մարմնամարզական և սպորտային իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տոնածառի զարդեր. ռադիոկառավարվող տրանսպորտային միջոցներ (խաղալիքներ). լույսով և ձայնով խաղալիքներ. թավշյա խաղալիքներ. տրանսպորտային նմուշների մասշտաբային մոդելներ. ավտոմեքենաներ (խաղալիքներ). խաղալիքներ սաղավարտի ճիշտ պատճեի ձևով. հարմարանքներ հողի գնդերը տեղում դասավորելու համար (գոլֆի պարագաներ). ցցիկ գոլֆի համար. պայուսակներ (անիվներով կամ առանց դրանց) գոլֆի մականների համար. դահուկներ. խաղազնդակներ. բիլյարդի գնդակներ. ծայրապանակներ (ծայրակալներ) բիլյարդի խաղաձողերի (կիյերի) համար. բիլյարդի խաղաձողեր (կիյեր). հարմարանքներ բիլյարդ խաղալիս չափանշելու համար. բիլյարդի սեղանների կողեզրերի պահպանակներ. բիլյարդի սեղաններ. գլուխկոտրուկներ՝ կազմված պատկերներ կազմող տարրերի հավաքածուից. շաշկի. շախմատ. խաղաթղթեր. տեսախաղերի ավտոմատներ.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ. տրանսպորտային միջոցների, դրանց կազմող մասերի և կցամասերի մանրածախ և

մեծածախ վաճառք. միջնորդային (դիլերային) գործակալություններ տրանսպորտային միջոցների ոլորտում. ապրանքների առաջխաղացում (երրորդ անձանց համար). տեղեկատվության հավաքում տվյալների համակարգչային բազաներից. տեղեկատվության կանոնակարգում տվյալների համակարգչային բազաներում. տրանսպորտային միջոցների գովազդ. ներմուծման - արտահանման գործակալություններ. ցամաքային փոխադրամիջոցների մասին տեղեկատվության տրամադրում, մասնավորապես՝ սպառողական ապրանքների և գների համեմատության մասին տեղեկատվություն. տեղեկատվական ծառայություններ, մասնավորապես՝ վառելիքի գների համեմատության մասին տեղեկատվություն.

դաս 38. հեռահաղորդակցություն. հեռահաղորդակցման ծառայություններ տրանսպորտային միջոցների սարքերի միջոցով. համակարգչային տերմինալների օգնությամբ իրագործվող կապ. հեռախոսակապ. հեռահաղորդակցության համաշխարհային համակարգչային ցանց մուտքի ապահովում. համակարգչի միջոցով հաղորդագրությունների, ձայնի և պատկերների հաղորդման ապահովում. թվային ֆայլերի հաղորդում. տրանսպորտային միջոցների սարքերից ընդունված թվային ֆայլերի հաղորդում. տվյալների բազայի մուտքի տրամադրում. հեռահաղորդակցական կապի համար սարքավորանքի վարձույթ.

դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում. գրքերի և պարբերականների ինտերակտիվ հրապարակում. տեքստային նյութերի հրապարակում (բացառությամբ գովազդային նյութերի). ուսումնական կամ զվարճալի մրցանակաբաշխությունների կազմակերպում. սպորտային մրցումների կազմակերպում. ավտոմրցավազքի մրցումների կառավարում և կազմակերպում. ներկայացումների տոմսերի ամրագրում. տրանսպորտային միջոցները վարելու հրահանգ. տեղեկատվություն կրթության և դաստիարակության հարցերով. կրթադաստիարակչական ծառայություններ.

սպորտային սարքերի տրամադրում.  
սպորտային սաքավորումների վարձույթ  
(բացառությամբ տրանսպորտային միջոցների).  
խաղաղահիլճների ծառայությունների տրա-  
մադրում:

(740) Արարատ Գալոյան

**(210) 20150405 (111) 23988**  
**(220) 26.03.2015 (151) 01.02.2016**  
**(181) 26.03.2025**

(730) «Քասախ ռեմիտայլ» ՍՊԸ, Երևան,  
Աշտարակի խճուղի 47/5, AM

(442) 20.04.2015  
(540)

**INBRANDY**

(511)

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով  
ապահովման ծառայություններ. ժամանակավոր  
բնակատեղով ապահովում:

**(210) 20150433 (111) 23989**  
**(220) 31.03.2015 (151) 01.02.2016**  
**(181) 31.03.2025**

(730) ՄասթրՔարդ Ինթերնեյշնլ Ինքորփորե-  
րեյթիդ, Դելավերի նահանգի կորպորացիա, US

(442) 07.05.2015  
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է կար-  
միր, երկնագույն և սպիտակ գունային համակ-  
ցությամբ:

(511)

դաս 9. համակարգչային ապարատների  
և ծրագրային պլատֆորմներ վճարում-  
ների, դրամագործության, վարկաքարտերի,  
հաշվեքարտերի, վճարաքարտերի, ավտո-  
մատացված դրամամեքենաների (բանկո-

մատների), կուտակված գումարի,  
էլեկտրոնային դրամամիջոցների փոխան-  
ցումների, էլեկտրոնային վճարումների,  
հաշվեվճարների տվյալների էլեկտրոնային  
մշակման և փոխանցման, կանխիկ  
վճարումների, գործարքների իսկության,  
երթուղման, իրավագործության տրամադրման,  
կարգավորման և վերահսկման, խարդա-  
խությունների բացահայտման և վերահսկման,  
աղետներից և վթարներից առաջացած  
վնասների և կորուստների վերականգնման  
և ծածկագրման, գաղտնագրման ծառա-  
յությունների աջակցման, իրականացման  
հեշտացման և կառավարման համար. գիտա-  
կան սարքեր և գործիքներ. մագնիսական  
տեղեկակիրներ, ծայնագրման սկավառակներ.  
կանխավճարով աշխատող ապարատների  
մեխանիզմներ. դրամարկղային ապարատներ.  
տեղեկատվության մշակման սարքավորումներ.  
համակարգիչներ, համակարգչային ապա-  
րատներ, համակարգչային ծրագրային  
արտադրանք և համակարգչային ծրագրեր.  
հեռահաղորդակցություն և էլեկտրական  
սարքեր և գործիքներ, այն է՝ տվյալների,  
ներառյալ՝ ձայնի և պատկերների գրառման,  
հաղորդման և վերարտադրման սարքեր.  
հաշվիչ մեքենաներ. տվյալների, ներառյալ՝  
ձայնի և պատկերների գրառման, հաղորդման,  
վերարտադրման սարքեր. մագնիսական  
գրառումների կրիչներ. գլոբալ համակարգչային  
ցանցի միջոցով ֆինանսական հաշիվների և  
հաշվետվությունների հետևման, կառավարման  
և վերլուծման սարքեր. համակարգչային  
ապարատներ և ծրագրեր, մասնավորապես՝  
տեղային և գլոբալ համակարգչային ցանցերի  
զարգացման, տեխնիկական սպասարկման  
և օգտագործման համար. հիշողության  
քարտեր և հիշողություններում պահպանվող  
տվյալներ, այդ թվում՝ ինտեգրալային  
սխեմայով հիշողություններ և բանկային  
քարտերի հիշողություններ կարդալու  
համակարգեր. ներբեռնվող էլեկտրոնային  
հրատարակություններ. տպիչ սարքեր, այդ  
թվում՝ տվյալների մշակման համակարգերի և  
ֆինանսական գործարքների համակարգերի  
տպիչ սարքեր. բանկային հիմնարկների  
ավտոմատացված դրամամեքենաներ (բանկո-  
մատներ) և թղթադրամի հաշվիչներ. կողա-

վորիչներ և ապակողավորիչներ. մողեսներ. համակարգչային ապարատներ և ծրագրեր էլեկտրոնային միջոցներով իրականացվող վճարային գործարքների աջակցման և հեշտացման համար. համակարգչային ապարատներ և ծածկագրման համակարգչային ծրագրեր, ծածկագրման բանալիներ, թվային վկայագրեր, թվային ստորագրություններ, համակարգչային ծրագրեր անհատների, բանկային և ֆինանսական հիմնարկների կողմից օգտագործվող սպառողների գաղտնի տեղեկատվության որոնման և փոխանցման և տվյալների անվտանգ պահպանման համար. մագնիսական ծածկագրված քարտեր և ինտեգրալային սխեմայով չիպեր (սմարթ քարտեր) պարունակող քարտեր. անվտանգության ծածկագրված անցաքարտեր. անվտանգության ֆունկցիաներով ծածկագրված քարտեր իսկության ճանաչման նպատակով. անվտանգության ֆունկցիաներով ծածկագրված քարտեր ինքնության ճանաչման նպատակով. հոլոգրամային քարտեր. վարկային վճարաքարտեր (որոշակի խանութի), բանկային քարտեր, վարկաքարտեր, հաշվեքարտեր, չիպային քարտեր, կուտակված գումարով քարտեր, էլեկտրոնային տեղեկակիր քարտեր, վճարաքարտեր և ծածկագրված վճարաքարտեր. բանկային քարտեր, այդ թվում՝ տպագրված բանկային քարտեր և մագնիսական հիշողությունների և ինտեգրալային սխեմայով հիշողությունների օգտագործմամբ բանկային քարտեր. քարտի ընթերցիչներ. մագնիսական ծածկագրված քարտի ընթերցիչներ, էլեկտրոնային տեղեկակիր քարտի ընթերցիչներ, էլեկտրոնային ծածկագրման սարքավորումներ, համակարգչային ապարատներ, համակարգչային վերջնասարքեր (տերմինալներ), համակարգչային ծրագրեր՝ ֆինանսական ծառայությունների, դրամագործության և հեռահաղորդակցական արդյունաբերության մեջ օգտագործման համար. համակարգչային ծրագրեր, որոնք մշակված են սմարթ քարտերը վերջնասարքերի և ընթերցիչների հետ փոխգործելու համար. հեռախոսներում և հաղորդակցական այլ սարքերում ներկառուցված համակարգչային չիպեր. հեռահաղորդակցական սարքավորումներ. առևտրի կետում գործարքի

կատարման տերմինալներ և համակարգչային ծրագրեր՝ գործարքի, նույնականացման և ֆինանսական տեղեկատվության փոխանցման, ցուցադրման և պահման համար ֆինանսական ծառայությունների տրամադրման, դրամագործության և հեռահաղորդակցական արդյունաբերության ոլորտներում. ռադիոհաճախական նույնականացման սարքեր (տրանսպոնդերներ). էլեկտրոնային վավերացման սարքեր վարկային վճարաքարտերի (որոշ խանութների), բանկային քարտերի, վարկաքարտերի, հաշվեքարտերի և վճարաքարտերի իսկության հաստատման համար. ավտոմատացված դրամամեքենաներ (բանկոմատներ). համակարգչային ծայրամասային սարքեր և էլեկտրոնային ապրանքներ, այն է՝ հաշվիչ մեքենաներ, գրպանի օրագրեր, անձնական թվային քարտուղարներ (PDAs) և վթարային ազդանշանային սարքեր, ազդասարքեր.

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար (որոնք ընդգրկված չեն այլ դասերում). տառաշարեր. տպագրական կլիշեներ, տպագրական հրատարակություններ, պամֆլետներ, բրոշյուրներ, թերթեր, հանդեսներ և ամսագրեր, ձեռնարկներ, տպագրական արտադրանք՝ բոլորը բանկային բնագավառին վերաբերող. վարկաքարտեր, հաշվեքարտեր, պարբերական հրատարակություններ.

դաս 35. գործերի կառավարում գործարարության ասպարեզում և խորհրդատվական ծառայություններ. խորհրդատվություն շուկայավարման վերաբերյալ. շուկայի հետազոտման ծառայություններ. քարտատերերի գնորդական վարքի հետևում, վերլուծում, կանխատեսում, տեղեկատվության տրամադրում և հաշվետվության կազմում. երրորդ անձանց

ապրանքների և ծառայությունների վաճառքի խթանում վարկաքարտերի, հաշվեքարտերի և վճարաքարտերի օգտագործումից ստացած պարզևատրումների և խրախուսանքների միջոցով. պարզևատրումային և լոյալության ծրագրերի վարչարարություն. գովազդ. վարչարարություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ. կոմերցիոն, արդյունաբերական և կառավարման հարցերով աջակցություն գործարարության ասպարեզում. կոմերցիոն գործունեության գնահատում. գործերի կառավարման խորհրդատվություն գործարարության ասպարեզում. շուկայավարման հետազոտություններ. վիճակագրական տեղեկատվություն (գործարարության ասպարեզում). հաշիվների հաշվետվությունների կազմում, հաշիվների քաղվածքների պատրաստում. հաշվապահական փաստաթղթերի վարում, հաշվապահական հաշվառում. կոնյունկտուրային հետազոտություններ. հասարակական հարաբերությունների հետ կապված ծառայություններ. գովազդային տեքստերի հրատարակում. գովազդային թռուցիկների և բրոշյուրների թողարկում. շարժական հեռահաղորդակցական միջոցներով տրամադրվող մանրածախ առևտրի ծառայություններ վարկաքարտերի և հաշվեքարտերի տրամադրման ոլորտում. առցանց համակարգով, ցանցերի կամ այլ էլեկտրոնային միջոցներով տրամադրվող մանրածախ առևտրի ծառայություններ վարկաքարտերի և հաշվեքարտերի տրամադրման վերաբերյալ էլեկտրոնային ձևով թվայնացված տեղեկատվության օգտագործմամբ. համակարգչային տվյալների հիմնապաշարի կառավարում և վերահսկում. տվյալների մշակման, ստուգման և վերահսկման ծառայություններ. տվյալների պահման և որոնման ծառայություններ. երրորդ անձանց համերգների և մշակութային միջոցառումների անցկացման խթանում և գովազդում, ցուցահանդեսների և էքսպոզիցիաների կազմակերպում կոմերցիոն կամ գովազդային նպատակներով. տրանսպորտի, ճանապարհորդությունների, հյուրանոցների, ժամանակավոր կացարանների, սննդամթերքի

և կերակուրների, սպորտի, զվարճությունների և տեսարժան վայրերի, տուրիստական գործակալությունների ծառայությունների, սակագների, երթացուցակների, գրաֆիկների, փոխադրման միջոցների և ճանապարհորդությունների կազմակերպման գովազդ. առցանց ռեժիմում համացանցի և այլ համակարգչային ցանցերի միջոցով ապրանքների և ծառայությունների գնմանը վերաբերող տեղեկատվության տրամադրում. տվյալների պահոցների և հաճախորդի վերաբերյալ հստակ տեղեկատվության տրամադրման ծառայություններ. բոլոր վերը նշված ծառայությունների հետ կապված տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում.

դաս 36. ֆինանսական ծառայություններ, այն է՝ բանկային, վարկաքարտերի, հաշվեքարտերի, վարկային վճարաքարտերի (որոշակի խանութի), կուտակված գումարով քարտերի միջոցով առաջարկվող կանխավճարային քարտերի ծառայություններ, էլեկտրոնային վարկային և դեբետային գործարքներ. հաշիվների վճարման և ներկայացման ծառայություններ. կանխիկ վճարումների ծառայություններ. վճարագրերի իսկության հաստատում. վճարագրերի կանխիկացում. պահպանվող արժեքներին և ավանդներին մուտքի տրամադրման և ավտոմատացված դրամամեքենաների (բանկոմատների) ծառայություններ, գործարքների իրավազորության ստուգման և հաշիվների վճարման հարցերով ծառայություններ, գործարքների համաձայնեցում և ստուգում, դրամամիջոցների և կանխիկի կառավարում, համախմբված դրամամիջոցների վճարում, տարածայնությունների և վեճերի համախմբված ուսումնասիրում և կարգավորում. տվյալների պահոցների և հաճախորդի նկարագրի և դրանց փոխադրման, մուտքի տրամադրման, հաշվարկման, կարգավորման, համաձայնեցման և ստուգման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և դրամամիջոցների շարժի ծառայություններ վճարաքարտերի ոլորտում, էլեկտրոնային վճարումների մշակման ծառայություններ, վճարումների գործարքների իսկության ստուգման, հաստատման և վերահսկման ծառայություններ, դրամամիջոցների փոխանցման

ծառայություններ, այն է՝ հասարակական համակարգչային ցանցերի միջոցով անվտանգ էլեկտրոնային կանխիկ գործարքներ և էլեկտրոնային կանխիկ փոխանցումներ՝ էլեկտրոնային առևտրի, էլեկտրոնային հաշվարկների համակարգում դրամամիջոցների փոխանցման խթանման և հեշտացման համար, ֆինանսական տեղեկատվության տրամադրում, այն է՝ վարկաքարտերի և հաշվեքարտերի տվյալներ և հաշվետվություններ, ֆինանսական փաստաթղթերի և հաշվետվությունների վարում, դրամամիջոցների համակարգչային փոխանցման և տարադրամի փոխանակման ծառայություններ, ֆինանսական գնահատում և ռիսկերի կառավարման ծառայություններ երրորդ անձանց համար սպառողական վարկերի ոլորտում. ֆինանսական տեղեկատվության տարածում գլոբալ համակարգչային ցանցի միջոցով, անվտանգ տեղեկատվական համակարգչային ցանցի միջոցով տրամադրվող ֆինանսական տեղեկատվություն, և վերը նշված բոլոր ծառայություններին վերաբերող խորհրդատվություն. մանրածախ առևտրին աջակցող ֆինանսական ծառայություններ, որոնք տրամադրվում են շարժական հեռահաղորդակցական միջոցներով, այն է՝ անլար սարքերի միջոցով վճարման ծառայություններ. էլեկտրոնային ցանցերի միջոցով մանրածախ առևտրին աջակցող առցանց տրամադրվող ֆինանսական ծառայություններ. ֆինանսական վերլուծություն և խորհրդատվություն. ապահովագրական ծառայություններ. ֆինանսական գործունեություն, դրամավարկային գործառնություններ. ֆինանսական ծառայություններ. բանկային և վարկային ծառայություններ. վարկաքարտերի, հաշվեքարտերի, վարկային վճարաքարտերի (որոշ խանութների) և կուտակված գումարով կանխավճարային քարտերի միջոցով սպասարկման ծառայություններ. բանկային, վճարային, վարկային, դեբետային, կանխիկ վճարային ծառայություններ և պահպանվող արժեքներին, նախօրոք վճարված ավանդներին մուտքի տրամադրման ծառայություններ. հաշիվների և մուրհակների վճարման ծառայություններ. վարկաքարտերով, հաշվեքարտերով, վարկային վճարաքարտերով (որոշ խանութների), կանխավճարված քարտերով և

կուտակված գումարով քարտերով սպասարկման ծառայություններ. վճարագրերի իսկության ստուգման և վճարագրերի մարման, կանխիկացման ծառայություններ. ավտոմատացված դրամամեքենաների (բանկոմատների) ծառայություններ. ֆինանսական գործարքների մշակում, ինչպես առցանց ռեժիմում համակարգչային տվյալների հիմնապաշարի կամ հեռահաղորդակցական միջոցներով, այնպես էլ առևտրի վայրերում. քարտատերերի կողմից ավտոմատացված դրամամեքենաների միջոցով իրականացված ֆինանսական գործարքների մշակում. ավտոմատացված դրամամեքենաների միջոցով քարտատերերին հաշվեկշռի մասին տվյալների, ավանդների և հաշվից գումարների տրամադրում. ֆինանսական կարգավորման, հաշիվների վճարման և իրավագործության ստուգման ծառայություններ՝ կապված ֆինանսական վճարումների գործարքների մշակման հետ. ճանապարհորդությունների ապահովագրություն. ճանապարհորդային վճարագրերի և կտրոնների թողարկում և մարում. վճարողների իրավասության հաստատման ծառայություններ. ֆինանսական տեղեկատվության ստուգում և վերահսկում. ֆինանսական փաստաթղթերի վարում և գրառումների տեխնիկական օժանդակություն. դրամամիջոցների փոխանցում էլեկտրոնային հաշվարկների համակարգում և տարադրամի փոխանակում. հեռավոր փոխանցումների ծառայություններ. կուտակված գումարով էլեկտրոնային վճարային համակարգերի ծառայություններ, դրամամիջոցների և տարադրամի էլեկտրոնային փոխանցում, էլեկտրոնային վճարումներ, կանխավճարային հեռախոսային քարտերի ծառայություններ, կանխիկ վճարումներ, գործարքների իրավագործության ստուգման, կարգավորման և հաշիվների վճարման ծառայություններ. ռադիոհաճախական նույնականացման սարքերի (տրանսպոնդերների) միջոցով տրամադրվող դեբետային և վարկային ծառայություններ. կապի և հեռահաղորդակցական սարքերի միջոցով տրամադրվող դեբետային և վարկային ծառայություններ. վճարագրերի իսկության ստուգման ծառայություններ. ճանապար-

հորդների վճարագրերին և ճանապարհորդային կտրոններին վերաբերող թողարկման և մարման ծառայություններ. մանրածախ առևտրին աջակցող ֆինանսական ծառայություններ, որոնք տրամադրվում են շարժական հեռահաղորդակցական միջոցներով, այդ թվում՝ անլար սարքերի միջոցով վճարման ծառայություններ. հեռախոսային և հեռահաղորդակցական կապով վարկային և դեբետային գործարքների մշակում. մանրածախ առևտրին աջակցող առցանց ֆինանսական ծառայություններ, որոնք տրամադրվում են ցանցերի միջոցով կամ էլեկտրոնային ձևով թվայնացված տեղեկատվություն օգտագործող այլ էլեկտրոնային միջոցներով. դրամամիջոցների փոխանցման և փոխանակման ծառայություններ, այն է՝ դրամամիջոցների, այդ թվում՝ էլեկտրոնային դրամամիջոցների անվտանգ փոխանակում և փոխանցում համակարգչային ցանցերի միջոցով, որտեղ մուտքն ապահովվում է «սմարթ» քարտերի միջոցով. վեբ-կայքերի միջոցով տրամադրվող հաշիվների վճարման ծառայություններ. առցանց ռեժիմում տրամադրվող բանկային ծառայություններ. հեռախոսով և գլոբալ համակարգչային ցանցի կամ համացանցի միջոցով տրամադրվող ֆինանսական ծառայություններ. գլոբալ համակարգչային ցանցի կամ համացանցի միջոցով տրամադրվող ֆինանսական ծառայություններ. անշարժ գույքի հետ կապված ծառայություններ. մասնավոր անշարժ գույքի հետ կապված ծառայություններ. անշարժ գույքի գնի որոշում. անշարժ գույքի հետ կապված ներդրումային կառավարում. անշարժ գույքի հետ կապված ներդրումային ծառայություններ. անշարժ գույքի ապահովագրում. գույքի սեփականատերերի համար ապահովագրում. գույքի և սեփականության հետ կապված ապահովագրական ծառայություններ. անշարժ գույքի հետ կապված ֆինանսավորման ծառայություններ. անշարժ գույքի հետ կապված միջնորդային ծառայություններ. անշարժ գույքի գնահատում. անշարժ գույքի գործակալությունների ծառայություններ. անշարժ գույքի փորձաքննություն. անշարժ գույքի կառավարման հետ կապված ծառայություններ. անշարժ գույքի հետ կապված ֆինանսական գործարքների

կառավարում. անշարժ գույքի հետ կապված հիփոթեքային վարկերի և փոխառությունների տրամադրում. անշարժ գույքի կառուցման, վերանորոգման և սպասարկման հետ կապված ֆինանսական ծառայություններ. անշարժ գույքի բնագավառում ֆինանսական միջնորդական ծառայություններ. մասնավոր անշարժ գույքին և շինություններին վերաբերող ֆինանսական ծառայություններ. անշարժ գույքի ձեռք բերման համար տրամադրվող ֆինանսական ծառայություններ. անշարժ գույքի գրավադրմամբ փոխառության պայմանագրերի կազմում. անշարժ գույքի համատեղ սեփականության կազմակերպում. անշարժ գույքի ձեռք բերման համար ֆինանսական միջոցների տրամադրման կազմակերպում. անշարժ գույքի ձեռք բերման և անշարժ գույքի մեջ արտադրամիջոցների ներդրումների հետ կապված աջակցություն. արտադրամիջոցների ներդրում անշարժ գույքի մեջ. ներդրման ծառայություններ առևտրի նպատակներով օգտագործվող գույքի բնագավառում. սեփականության ձեռք բերման վերաբերյալ ֆինանսական ծառայություններ. սեփականության վաճառքին վերաբերող ֆինանսական ծառայություններ. սեփականության բացառիկ իրավունքով անշարժ գույքի և հողի ֆինանսական գնահատում. վարձակալված սեփականության ֆինանսական գնահատում. անշարժ գույքի վարձույթի կազմակերպում. անշարժ գույքի վարձակալության կազմակերպում. սեփականությունը վարձակալության հանձնելու ծառայություններ. անշարժ գույքը վարձակալության հանձնելու ծառայություններ. սեփականության բացառիկ իրավունքով անշարժ գույքի և հողի վարձակալություն. գույքի կառավարման ծառայություններ, որոնք վերաբերում են անշարժ գույքի հետ կապված գործարքներին. գույքի և սեփականության գնահատում. անշարժ գույքի և սեփականության օբյեկտների արժեթղթերի փաթեթի կառավարում. գույքի և սեփականության կառավարում. անշարժ գույքի սեփականության վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ. անշարժ գույքի գնի որոշման, գնահատման վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ. բաժնետիրական անշարժ գույքի վերաբերյալ

խորհրդատվական ծառայություններ. անշարժ գույքի վերաբերյալ համակարգչայնացված տեղեկատվական ծառայություններ. անշարժ գույքի վերաբերյալ խորհրդակցական ծառայություններ. անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. անշարժ գույքի շուկայի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. անշարժ գույքի ձեռք բերման վերաբերյալ հետազոտություններ. անշարժ գույքի ընտրման վերաբերյալ հետազոտություններ. հիփոթեքային ֆինանսավորում և ակտիվների արժեթղթավորում. վճարումների իրականացման լուծումների, դրամագործության վերաբերյալ, վարկաքարտերի, հաշվեքարտերի, վճարաքարտերի և ավտոմատացված դրամամեքենաների վերաբերյալ խորհրդակցություն.

